ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԻ

08.09.2025թ.

2025 թվականի Սեպտեմբերի 8-ին՝ ժամը 15:30-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի վարչական շենքում տեղի ունեցավ մասնակցային բյուջետավորման հանձնաժողովի նիստ: Օրակարգում՝ Վաղարշապատ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացում ստացված առաջարկների նախնական գնահատումն էր:

Հանձնաժողովի նախագահ Մանվել Մելիքյանը ներկայացրեց ստացված առաջարկները, որոնք ութն էին: Վերջիններս նիստի ընթացքում հանձնաժողովի կողմից անցան Վաղարշապատ համայնքի ավագանու կողմից հաստատված մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակով՝

1. Վաղարշապատի զբոսաշրջային միջավայրի բարելավման ծրագիր
2. Բացօթյա կինոթատրոն-գրադարան
3. Խաղի անկյուն Չարենց թաղամասում
4. Սուրբ Մարիանե այգու հարակից տարածքի կանաչապատում, բարեկարգում
5. Ապագան սկսվում է կանաչից
6. Ծառատունկ կենտրոնական փողոցների երկայնքով
7. Էջմիածնի կենտրոնական զբոսայգու բարեկարգում
8. Ֆուտզալի սիրողական խաղերի ակումբի ստեղծում

Նիստի վերջում հայտարարվեց, որ նախնական գնահատման արդյունքում առաջին հինգ ծրագրերը անցնում են հանրային քննարկման և քվեարկության փուլ:

Հանձնաժողովի կողմից արձանագրված արդյունքները հիմք կհանդիսանան գործընթացի հետագա փուլերի կազմակերպման համար:

Հանձնաժողովի նախագահ՝ Մանվել Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարիամ Զաքարյան